ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 11, 1965 Общественные науки

Ս. Ա. Ավետիսյան

ՔԱՂԱՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սովետական կարգերի հաստատումը Հայաստանում հայ ժողովրդի տնտեսության և կուլտուրայի ծաղկման համար մեծ հեռանկարներ բացեց։ Օգտագործելով տեղական հումքային, էներգետիկ և աշխատանքային հարուստ ռեսուրսները՝ Հայաստանը, որ անցյալում ցարական Ռուսաստանի հետամնաց մի գաղութն էր, սովետական իշխանության տարիներին դարձավ առաջնակարգ արդյունաբերություն ունեցող հանրապետություն։

Սոցիալիստական շինարարության ընթացքում հանրապետությունում ստեղծվել է բազմաճյուղ ժողովրդական տնտեսություն, կազմակերպվել ժամանակակից տեխնիկայով հագեցված արդյունաբերություն։ Սովետական իշխանության ծնունդն են մեքենաշինությունն ու քիմիական արդյունաբերությունը։ Հսկայական քայլերով առաջ է գնացել գունավոր մետալուրգիայի, սննդի, թեթև, մասնավորապես տեքստիլ-տրիկոտաժի արտադրությունը։ Սովետական Հայաստանի 1964 թ. ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքը (համադրելի գներով) 1913 թ. մակարդակը գերազանցել է 95 անգամ, այնինչ ՍՍՌՄ-ում, ամբողջությամբ վերցրած այն աճել է միայն 56 անգամ։ Այժմ գործում են ավելի քան 500 խոշոր և միջակ կարողության արդյունաբերական ձեռնարկություններ։

* * *

Հանրապետության բուռն թափով զարգացող արտադրողական ուժերը խթանեցին քաղաքային բնակավայրերի ընդարձակմանը և բնակչության թվի ավելացմանը։

Սովետական Հայաստանի ներկա տերիտորիայում քաղաքային բնակավայրեր առաջացել են շատ վաղուց, դեռ մեր թվարկությունից առաջ, սակայն տարբեր են եղել նրանց ճակատագրերը։ Այդ քաղաքների մի մասը անցյալում մեծ դեր է խաղացել Հայաստանի քաղաքական-տնտեսական կյանքում, բայց պատմական զարգացման ընթացքում նրանցից շատերը կորցրել են իրենց վաղեմի նշանակությունը։ Հնագույն քաղաքներից միայն Երևանն է, որ պահպանել է իր նշանակությունը և սովետական իշխանության տարիներին դարձել հանրապետության քաղաքական-տնտեսական և կուլտուրական խոշոր կենտրոն։ Հայաստանում սովետական իշխանության հաստատումից հետո բազմաթիվ նոր քաղաքային բնակավայրեր առաջացան։

Նախահեղափոխական Հայաստանի (ներկա տերիտորիայի սահմաններում) քաղաքներն էին Երևանը, Ալեքսանդրապոլը (Լենինականը), Նոր Բայազետը (Կամոն) և Գորիսը, որոնցից վերջին երեքը առաջացել են անցյալ հարյուրամյակում կապիտալիստական հարաբերությունների զարգացման ժամանակ։ Սրանց կողքին ժողովրդական տնտեսության վերականգնման տարինե-

ին Սովետական Հայաստանում հանդես եկան ևս երեք քաղաք՝ Ղարաքիլիսան (Կիրովականը), Վաղարշապատը (Էջմիածինը) և Դիլիջանը։

1926 թ. մարդահամարի ժամանակ հանրապետությունում գրանցվեց 7 քաղաք և 14 քաղաքատիպ ավան, 167,1 հազար բնակչությամբ, որ կազմում էր Սովետական Հայաստանի ամբողջ բնակչության 14,1%-ը, 1913 թ. 10,4 տոկոսի դիմաց։ Այդ մասին պատկերացում է տալիս № 1 աղյուսակը.

Բնակավայրեր	Գավառներ, քաղաքներ, ավաններ	Առկա բնակչությունը		
		արական	իգական	ընդամենը
Երևանի	գավառ	35778	31958	67736
Երևան	քաղաք	34137	30476	64613
Դարաչիչագ (Ծաղկաձոր)	ամառանոց	304	314	618
Ղամարլու (Արտաշատ)	ավան	1337	1168	2505
Դարալագյազի	գավառ	862	718	1580
Քեշիշքենդ (Եղեգնաձոր)	ավան	862	718	1580
Դիլիջանի	գավառ	4914	3811	8725
Դիլիջան	քաղաք	3745	2719	6464
Իջևան	ավան	1169	1092	2261
Զանգեզուրի	գավառ	2538	1663	4201
Գորիս	քաղաք	1334	1356	2690
Ղափանի հանքերի	ավան	1204	307	1511
Լենինականի	գավառ	21803	20510	42374
Լենինական	քաղաք	21803	20510	42374
Մեղրիի	գավառ	638	523	1161
Մեղրի	ավան	638	523	1161
Նոր Բայազետի	գավառ	4701	4778	9479
Նոր Բայազետ (Կամո)	քաղաք	4172	4275	8447
Ելենովկա (Սևան)	ավան	529	503	1032
Փամբակ-Լոռու	գավառ	9448	8633	18081
Ղարաքիլիսա (Կիրովական)	քաղաք	4396	4244	8640
Այվերդի	բանավան	1156	947	2103
Մանես	բանավան	532	359	891
Սանահին	բանավան	326	337	663
Ստեփանավան	ավան	2503	2467	4970
Շամլուղի	բանավան	535	279	814
Էջմիածնի	գավառ	7267	6555	13822
Վաղարշապատ (Էջմիածին)	քաղաք	4442	3994	8435
Աշտարակ	ավան	2459	2394	4853
Սարդարարաղ (Հոկտեմբեր)	բանավան	366	167	533
		87.949	79.149	167093

Քաղաքային բնակավայրերի այդպիսի արագ աճը պայմանավորված էր ոչ թե հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացմամբ, երկրի ինդուստրացումով, որ այդ ժամանակաշրջանում դեռ չէր էլ սկսվել և, հետևապես, առանձին որակական փոփոխություններ չէր կարող առաջացնել, այլ հետևանք էր այն բանի, որ մարդահամարի ժամանակ քաղաքային և գյուղական բնակավայրերն առանձնացնելիս ցուցաբերվել են ձևական մոտեցում, 14 բնակավայր դասվել են քաղաքատիպ ավանների շարքը։ Այդ մասին 1926 թ. հա-

մամիութիւնական մարդահամարի բացատրական դիտողություններում ասված է. «քաղաքային վայրերն առանձնացնելու համար ձևական բնույթ կրող առաջին հատկանիշը ծառայել է դրանց օրենսդրական կարգով պաշտոնապես քաղաք կամ քաղաքատիպ վայր ընդունելը։ Բոլոր այդպիսի վայրերը մարդահամարի ժամանակ ենթակա են եղել գրանցման որպես քաղաքային վայրեր։

Բացի դրանից, քաղաքային վայրեր են համարվել այն բնակավայրերն, որոնք ունեցել են ներքոհիշյալ երեք հատկանիշներ.

1. Ըստ բնակավայրերի բնույթի՝ ա) ֆաբրիկա-գործարանային վայրեր, բ) կայարանային, գ) ամառանոցային, դ) ավաններ, ե) առևտրա-արդյունաբերական գյուղեր։

2. Ըստ բնակչության զբաղմունքի՝ ինքնագործ բնակչության կեսից ոչ պակասի գլխավոր զբաղմունքը գյուղատնտեսությունը չէ։

3. Ըստ բնակչության քանակի՝ գործարանային, կայարանային, ամառանոցային վայրեր, որոնք ունեն ոչ պակաս քան 500 բնակիչ, իսկ առևտրա-արդյունաբերական գյուղերը՝ ոչ պակաս քան 2000 բնակիչ»[1]։

Ղեկավարվելով այս կանոններով մարդահամարի ժամանակ քաղաքային բնակավայրերի շարքին են դասվել արդյունաբերական, երկաթուղային, ամառանոցային, ֆաբրիկա-գործարանային, գլխավոր ճանապարհների վրա գտնվող ավանները և գավառների կենտրոնները։ Սակայն իրականում ՀՍԽՀ Կենտգործկոմի կողմից 1924 թ. ապրիլի 8-ին հրամանագրվել էին միայն 7 քաղաք (Երևան, Լենինական, Ղարաքիլիսան, Նոր Բայազետ, Դիլիջան, Վաղարշապատ, Գորիսը), որտեղ ապրում էր 141,7 հազար բնակիչ կամ հանրապետության ամբողջ բնակչության միայն 16,1 տոկոսը, իսկ մյուս քաղաքատիպ ավաններն իրենց 25,4 հազար բնակչությամբ դեռ պաշտոնապես չէին դասվել քաղաքների շարքը, ուստի 1926 թ. քաղաքային բնակավայրերի և նրանց բնակչության վերաբերյալ տվյալները պետք է ընդունել որոշ վերապահումներով։ Քաղաքային ցանցը ընդարձակվեց և բնակավայրերն քաղաքների շարքը դասելու կարգի մասին որոշակի պարզություն մտցվեց հետագայում։

ՀամԿ(բ)Պ Կենտկոմի 1931 թ. հունվարյան պլենումը քննարկելով ՍՍՌՄ քաղաքային տնտեսության զարգացման հարցը, նշեց, որ «ՍՍՌՄ քաղաքային տնտեսության ներկա վիճակը, չնայած զգալի հաջողություններին, չի կարող բավարարել մասսաների աճող պահանջմունքները»[2]։

Արդյունաբերության հին կենտրոններում քաղաքային տնտեսության զարգացման ու վերակառուցման, այնտեղ ապրող բնակչության սպասարկումը բարելավելու հետ մեկտեղ պլենումը միաժամանակ առաջ քաշեց հարյուր հազարավոր նոր բանվորների տեղավորման և տեղաբաշխման հարցը։ Այդ կապակցությամբ պլենումն անհրաժեշտ համարեց վերակառուցել կիսաքաղաքային, կիսագյուղական տիպի նույն ավանները, որտեղ պետք է ստեղծվեր քաղաքային տնտեսություն։ Դրան զուգընթաց, օկրուգների[3] լիկվիդացումը, մի

---

1 1926 թ. համամիութենական մարդահամար, Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն, 1-ին մաս, Թիֆլիս, 1929, էջ 53։

2 ՍՄԿՊ-ն համագումարների, կոնֆերանսների և Կենտկոմի պլենումների բանաձևերում ու որոշումներում, 3 մաս, Երևան, 1955, էջ 153։

3 1921 թ. կեսերից ՀՍՍՌ տերիտորիայում ստեղծվեց վարչատերիտորիալ 9 օկրուգ, որը լիկվիդացվեց 1930 թ.։

շարք գյուղերի վերածումը շրջանային կենտրոնների, ինչպես նաև ՄՏԿ-ների ու խոշոր կոլտնտեսությունների և սովխոզների առաջացումը նպաստավոր պայմաններ ստեղծեցին նախկին գյուղերը քաղաքների վերածելու համար։

Ելնելով վերոհիշյալից, կուսակցությունը նոր ձևով գրեց քաղաքաշինության պրոբլեմը ժողովրդական տնտեսության վերակառուցման ժամանակաշրջանում, առաջ քաշեց հին քաղաքների վերակառուցման և նորերի շինարարության հարցը։

«Երկրի ինդուստրացումը գյուղական շրջաններում, արդյունաբերական նոր օջախների ստեղծումը սոցիալիստական հիմունքներով, ամբողջ գյուղատնտեսության վերակառուցումը, —ասված է ՀամԿ(բ)Պ 1931 թ. հունիսյան պլենումի որոշման մեջ,— տանում է ոչ միայն դեպի բնակչության աճը և ամենից առաջ պրոլետարիատի աճը քաղաքներում, այլև դեպի նոր քաղաքների առաջացումը, դեպի այսպես կոչված քաղաքային ավանների և այժմյան շրջկենտրոնների վերածումը սոցիալիստական քաղաքների...»[4]։

Քաղաքային ցանցի աստիճանաբար զարգացումը[5] միաժամանակ նպատակ ուներ միմյանց մոտեցնելու գյուղը և քաղաքը, որպեսզի վերջնականապես ոչնչացվեր դրանց միջև եղած հակադրությունները, ամրապնդվեր բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը։

Հաջողությամբ ավարտելով ժողովրդական տնտեսության վերականգնումը և առաջնորդվելով Կենտկոմի ցուցումներով՝ Սովետական Հայաստանը ձեռնամուխ եղավ տնտեսության սոցիալիստական վերակառուցման, հանրապետության ինդուստրացման, գյուղատնտեսության կոլեկտիվացման, արտադրողական ուժերի պլանաչափ տեղաբաշխման սկզբունքների հետևողական կիրառմանը։

Բնական հարուստ ռեսուրսների օգտագործումը հնարավորություն տվեց հանրապետությունում ստեղծելու բազմաճյուղ ժողովրդական տնտեսություն։

Ջրային ռեսուրսների կոմպլեքս օգտագործումը, էներգետիկ տնտեսության կազմակերպումը, որը Կովկասի կոմունիստներին ուղարկված Վ. Ի. Լենինի 1921 թ. ապրիլի 14-ի ցուցումների ուղղակի կատարումն էր, անհրաժեշտ նախադրյալներ ստեղծեց հանրապետությունում զարգացնելու արդյունաբերության, թե՛ հին (մասնավորապես պղնձի հանույթը), և թե՛ նոր (քիմիական, մեքենաշինական, շինարարական նյութերի և այլն) ճյուղերը։

Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացման համար վճռական նշանակություն ունեցավ կապիտալ ներդրումների ծավալի անընդհատ մեծացումը։ Առաջին հնգամյակում ներդրվեց 547 միլիոն ռուբլի (համադրելի գներով), երկրորդ հնգամյակում՝ մեկ միլիարդ 412 միլիոն, իսկ երրորդ հնգամյակի խաղաղ տարիներին՝ մեկ միլիարդ 508 միլիոն ռուբլի[6]։

Կապիտալ ներդրումների ընդհանուր գումարը այդ ժամանակաշրջանում կազմեց երեք միլիարդ 467 միլիոն ռուբլի։ Կարևոր դեր խաղաց նաև Սովետական Միության առավել զարգացած արդյունաբերական շրջաններից էլեկտրաշինության, քիմիական, մեքենաշինության արդյունաբերության ճյուղերի

4 ՍՄԿՊ-ն համագումարների, կոնֆերանսների և Կենտկոմի պլենումների որոշումներում և բանաձևերում, մաս 3, Երևան, 1955, էջ 142։

5 Որոշակի ճշգրտումից հետո 1930-ական թվականներին Սովետական Հայաստանում մնաց 6 քաղաք, Դիլիջանը դասվեց գյուղական բնակավայրերի շարքը, գյուղական բնակավայրեր համարվեցին նաև 1926 թ. գրանցված 14 քաղաքատիպ ավաններ։

6 «Советская Армения за 40 лет», Ереван, 1960, стр. 140—141.

և ջրաշինության մեջ աշխատող որակյալ մասնագիտական կադրերի և սարքավորումների ուղարկումը։

Այդ բոլորը ապահովեցին հանրապետության ժողովրդական տնտեսության արագ վերելքը՝ նախապատերազմյան տարիներին։ Արմատական վերակառուցման ենթարկվեցին գունավոր մետալուրգիայի հին կենտրոնները՝ Զանգեզուրը, Ալավերդին։ Հայտնաբերված հարուստ հանքավայրերի բազայի վրա ընդարձակվեց պղնձի հանույթը, կատարելագործվեց արտադրության պրոցեսը։ Շահագործման հանձնվեցին Անդրկովկասի քիմիական արդյունաբերության առաջնեկները՝ Կիրովականի քիմիական կոմբինատը, կրաքարի բազայի վրա աշխատող Երևանի սինթետիկ կաուչուկի գործարանը, Զորագէսը և շատ այլ ձեռնարկություններ։ Բարձր զարգացման հասավ տարբեր տեսակի շինարարական նյութերի՝ պահածոների, գինու, կոնյակի, բամբակի, մետաքսի և տրիկոտաժի արտադրությունը։

Այսպիսով, Սովետական Հայաստանը ցարական Ռուսաստանի նախկին հետամնաց գաղութը, լենինյան ազգային քաղաքականության կիրառման շնորհիվ, կարճ ժամանակամիջոցում դարձավ Սովետական Միության զարգացած ինդուստրիա և գյուղատնտեսություն ունեցող հանրապետություն։

1928—1940 թթ. ընթացքում Սովետական Հայաստանի ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքը աճեց 8,7 անգամ, իսկ ժողովրդական տնտեսության վերակառուցման և զարգացման բանալի հանդիսացող էլեկտրաէներգիայի արտադրությունը 20,6 միլիոն կիլովատ ժամից հասավ 395,3 միլիոն կիլովատ ժամի[7], շուրջ 19 անգամ գերազանցեց 1928 թ. մակարդակը։

Արդյունաբերության զարգացմանը զուգընթաց սկսվեց նաև նրա պլանաչափ տեղաբաշխումը։ Երևանը դարձավ ինդուստրիայի խոշոր կենտրոն։ 1940 թ. նա տվեց հանրապետության արդյունաբերության արտադրանքի ավելի քան 50 տոկոսը, մեծացավ արդյունաբերական մյուս հանգույցների՝ Լենինականի, Կիրովականի տեսակարար կշիռը, բավականաչափ զարգացան լեռնահանքային արդյունաբերության կենտրոններ Ղափանը, Ալավերդին։

Այսպիսով, հիմնականում ձևավորվեց հանրապետության արդյունաբերության պրոֆիլը։ Հայաստանը դարձավ գունավոր մետալուրգիայի, քիմիայի, մեքենաշինության կարևոր շրջան Միության մեջ՝ զարգացած թեթև և սննդի արդյունաբերության ճյուղերով հանդերձ։

Սովետական Հայաստանի արդյունաբերության այդպիսի բարձր մակարդակը, որն ամենից առաջ պայմանավորված էր տեղական բնական աշխատանքային հարուստ ռեսուրսների ռացիոնալ օգտագործումով և ռուս ժողովրդի եղբայրական օգնությամբ, հասցրեց քաղաքների և քաղաքատիպ ավանների ընդարձակմանը և բնակչության թվի ավելացմանը։

Հայտնի է, որ սոցիալիզմի ժամանակ քաղաքային բնակչության աճի տեմպերը գերազանցում են ամբողջ բնակչության աճի տեմպերին և այդ կապակցությամբ էլ փոխվում է քաղաքային ու գյուղական բնակչության թվական հարաբերակցությունը։

Սովետական Միության առաջին (1926 թ.) և երկրորդ (1939 թ.) մարդահամարների ժամանակ հանրապետության ամբողջ բնակչության թիվը ավե-

7 Նույն տեղում, էջ 44 և 68։

լացել էր մոտ 1,5 անգամ, իսկ քաղաքային բնակչությունը՝ 2,2 անգամ (167,1 հազարից հասել էր 366,4 հազարի)՝ կազմելով ամբողջ բնակչության 28,6 տոկոսը։ Իհարկե, քաղաքային բնակչության այդպիսի արագ վերելքը միայն բնական աճով չի կարելի բացատրել. դա հետևանք է նաև հանրապետության տնտեսության ներքին կառուցվածքում կատարված փոփոխությունների՝ գյուղական մի շարք բնակավայրեր քաղաքների, քաղաքատիպ ավանների վերածելու կամ էլ գոյություն ունեցող քաղաքների մեջ ձուլվելու։

1939 թ. հանրապետությունում քաղաքների թիվը ավելացավ ևս երեքով. Ղափանը, Ալավերդին, Ստեփանավանը դարձան քաղաք, իսկ Արթիկը, Արտաշատը, Դիլիջանը, Հոկտեմբերյանը, Սևանը, Արարատը, Շամլուղը, Անիպեմզան, Քանաքեռը վերածվեցին քաղաքատիպ ավանների։

1926—1939 թթ. բնակչության թիվն աճել է՝ մայրաքաղաքում ավելի քան 3 անգամ, գունավոր մետալուրգիայի կենտրոններում (Ալավերդի, Ղափան)՝ 2,3—5.4 անգամ, Հոկտեմբերյանում՝ 11 անգամ, Արարատում 5 անգամ և, ընդհակառակը, որոշ չափով պակասել է Կամո և Դիլիջան քաղաքների բնակչության թիվը։ Քաղաքային բնակավայրերում բնակչության թվի այդպիսի անհավասար աճը բացատրվում է այդ տարիներին արդյունաբերության անհավասար զարգացմամբ. առավել ուշադրություն է դարձվել մայրաքաղաքի և Միության համար մեծ նշանակություն ունեցող գունավոր մետաղների ու հատկապես պղնձի արտադրության զարգացմանը։

Հանրապետության քաղաքները ընդարձակվեցին հատկապես հաջորդ տասնամյակներում՝ կապված ժողովրդական տնտեսության բուռն զարգացման և նոր տեղաբաշխման հետ։ Պատերազմի տարիներին առավել ուշադրություն դարձվեց պաշտպանական նշանակություն ունեցող արտադրության՝ պղնձի, քիմիական, մետաղամշակման, տեքստիլ, կաթի, մսի պահածոների արտադրանքի ընդարձակման վրա։

Արտադրողական ուժերի զարգացումը ավելի բարձր տեմպով ընթացավ հետպատերազմյան տարիներին, երբ մեծ չափով աճեց արդյունաբերության հիմքերի հիմք հանդիսացող ծանր ինդուստրիան։ Հայաստանի արդյունաբերության հիմնական ուղղությունը դարձավ գունավոր մետալուրգիան, քիմիան, սարքաշինությունը, էլեկտրատեխնիկական մեքենաշինությունը։ Ծանր արդյունաբերության արագ վերելքը խթանեց արտադրողական ուժերի զարգացմանը, նրա ռացիոնալ տեղաբաշխմանը և բնակչության բարձր զբաղվածությանը։

Պատերազմից հետո տեղական հումքի տեսակների, մասնավորապես կիսաֆաբրիկատների և մնացուկների էներգետիկ ռեսուրսների կոմպլեքսային օգտագործման անցնելը վճռական դեր խաղաց արդյունաբերության որոշ ճյուղերում կիսաֆաբրիկատների վերամշակումից վերջնական արտադրանք ստանալու գործում։ Դա հնարավորություն տվեց է՛լ ավելի ռացիոնալ օգտագործել էլեկտրաէներգիան, խիստ ընդլայնել արտադրանքի ասորտիմենտը։ Հզորացավ հանրապետության էներգետիկ տնտեսությունը, լրիվ ավարտվեց Սևան—Հրազդան կասկադը, Ղարադաղի գազի բազայի վրա աշխատող Երևանի, Կիրովականի ջերմաէլեկտրակայանների առաջին հերթը, շուտով շարք կմտնի նաև Հրազդանի ջերմակայանը։ Էներգետիկ կարողություններն անընդհատ զարգանալու շնորհիվ 1964 թ. Հայաստանում արտադրվեց 2 միլիարդ 842 միլիոն կիլովատ ժամ էլեկտրաէներգիա՝ 7,2 անգամ գերազանցելով նա-

խապատերազմյան (1940 թ.) մակարդակը։ Երկրին ուրախացրին ընդերքի հետախույզները. մեր երկրաբանները հայտնաբերեցին նոր հարուստ հանքավայրեր. պղինձ և մոլիբդեն՝ Զանգեզուրում, ոսկի՝ Բասարգեչարում, նեֆելինային սիենիտներ ու երկաթ՝ Հրազդանում և մետաղային ու ոչ մետաղային բազմաթիվ այլ հանքավայրեր։

Սովետական Հայաստանը դարձավ գունավոր մետալուրգիայի, քիմիայի, սարքաշինության և հատկապես էլեկտրատեխնիկայի, մեքենաշինության խոշոր կենտրոն Միության մեջ։ Ետպատերազմյան տարիներին կառուցվել և գործարկվել են Քաջարանի, Դաստակերտի, Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատները, ալյումինի, Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական. պոլիվինիլացետատ գործարանները և տասնյակ մեծ ու միջին կարողություն ունեցող այլ ձեռնարկություններ։ 1940—1959 թթ. շարք են մտել 118[8], իսկ յոթնամյակի անցած վեց տարում՝ 220 արդյունաբերական ձեռնարկություններ, չհաշված միջին և փոքր կառուցումները։ Խիստ ընդարձակվեցին գոյություն ունեցող արդյունաբերական մյուս ձեռնարկությունները։ Հանրապետության ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքը, 1940 թ. համեմատությամբ, 1963 թ. աճել է 10,3 անգամ, մեքենաշինությանը և մետալամշակմանը՝ 82,5 անգամ, շինանյութերինը՝ 27 անգամ[9]։

Ինդուստրացման այդպիսի բարձր մակարդակը ապահովեց ազգային եկամուտում արդյունաբերության տեսակարար կշռի բարձրացումը. 1963 թ. այն կազմեց 58,4 տոկոս, 1953 թ. 53,5 տոկոսի դիմաց[10]։

Այդ ժամանակամիջոցում, բացի Երևանից, որի դերը որպես մայրաքաղաք և որպես առաջատար ինդուստրիայի կենտրոն խիստ բարձրացավ, ձևավորվեցին Կիրովականի, Լենինական—Արթիկի, Զանգեզուրի (Կապան—Քաջարան—Ագարակ), Ալավերդու և Հրազդան—Սևանի արդյունաբերական հանգույցները։ Դրանք լայն ճանաչում ստացան Հանրապետությունում և Սովետական Միության մյուս շրջաններում։

Արտադրողական ուժերի բուռն զարգացումը և նոր տեղաբաշխումը միաժամանակ արմատական փոփոխություններ մտցրեցին Հանրապետության քաղաքային և գյուղական բնակչության կառուցվածքի մեջ, նպաստեցին քաղաքային ցանցի ընդարձակմանը, առանձին քաղաքների խոշորացմանը և քաղաքային բնակչության տեսակարար կշռի զգալի բարձրացմանը։ 1959 թ. համամիութենական մարդահամարի ժամանակ Հանրապետության բնակչության կեսը կազմեց քաղաքային բնակչությունը, իսկ առ 1 հունվարի 1965 թ. դրությամբ, նրա տեսակարար կշիռը հասավ 55,1 տոկոսի։

Քաղաքային բնակչության այդպիսի բարձր տոկոսը պայմանավորված է. մի կողմից բնական աճով, մյուս կողմից, որ հիմնականն է, ներքին տեղաշարժերով՝ գյուղական բնակչության մի մասի արդյունաբերության մեջ մշտական աշխատանքի անցնելով։ Լեռնային սակավահող շրջանների բնակիչների մի մասը կազմակերպված կերպով վերաբնակեցվել է քաղաքային վայրերում։ Այսպես, օրինակ, միայն 1959—1965 թթ. ընթացքում Հանրապետության շրջանների մոտավորապես կեսում գյուղական բնակչությունը ոչ միայն չի աճել, այլ 74 հազարով պակասել է, իսկ առանձին շրջաններում՝ է՛լ ավելի է

8 Նույն տեղում. էջ 142։

9 «Народное хозяйство Армянской ССР в 1963 г.», Ереван, 1964, стр. 36—37.

10 Նույն տեղում, էջ 26։

նվազել։ Օրինակ՝ Հրազդանի շրջանում նվազել է 44,6, Աղինի, Ազիզբեկովի շրջաններում՝ 37,5, Ղափանի, Ապարանի, Արթիկի շրջաններում՝ 24—29 տոկոսով և այլն։ Միայն Զանգեզուրում վերջին և նախորդ մարդահամարների ժամանակ 500-ից ավելի բնակիչ ունեցող 38 գյուղում բնակչությունը պակասել է 32,2 տոկոսով։

Գյուղական բնակչության նվազումը մասամբ պետք է բացատրել գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացումով։ Աշխատատար պրոցեսները մեքենայացնելու հետևանքով կոլտնտեսությունների, սովխոզների ազատված աշխատուժը փոխադրվել է արդյունաբերության և շինարարության բնագավառ։

Կարևոր դեր է խաղացել և այն հանգամանքը, որ արդյունաբերության բնույթի փոփոխմանը զուգընթաց փոխվել է և գյուղի բնակչության զբաղմունքի բնույթը, գյուղականից այն վերածվել է քաղաքայինի։ Օրինակ՝ Ողջի, Փիրդոուդան, Կաթնառատ և մի շարք այլ գյուղերի բազայի վրա ստեղծվել է լեռնահանքային հանույթի խոշոր կենտրոն՝ Քաջարան քաղաքը։ Նույնպիսի ճանապարհով մեծացել են և գունավոր մետալուրգիայի մյուս կենտրոնները՝ Ղափանը, Ալավերդին։

Քաղաքային բնակչության աճին զգալի չափով նպաստել է նաև հայրենադարձությունը։ Ետպատերազմյան տարիներին արտասահմանից հայրենիք վերադարձած հայերի ճնշող մասը վերաբնակվել է քաղաքային վայրերում, նոր ստեղծված արդյունաբերական կենտրոններում, առողջարաններում (Ջերմուկ, Արզնի, Դիլիջան) և ուրիշ քաղաքներում։

Եվ, վերջապես, քաղաքային բնակչությունն աճել է գյուղական որոշ շրջկենտրոններ արդյունաբերության զարգացման կապակցությամբ, քաղաքատիպ ավանների վերածելու շնորհիվ։ Վերջին խմբի մեջ մտնող ավաններում ապրում են 93,1 հազար բնակիչ, որը կազմում է քաղաքային բնակչության 8,3 տոկոսը։

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում քաղաքային բնակչության տեղաբաշխումը տնտեսական շրջաններում։ Այդ մասին պատկերացում է տալիս ստորև տպագրված աղյուսակը։

Աղյուսակ 2

Տնտեսական[11] շրջաններ	Տերիտորիան[12]		բնակչութ. առ 1-ը հունվարի 1965 թ.	Այդ թվում		1 քմ. կիլոմետրին միջին հաշվով ընկնում է բնակիչ
	տարած. հազար քառ. կմ.	տոկոսն. ընդհ. տար. նկատմ.		քաղաքային բնակչութ.	գյուղական բնակչութ.	
Արարատյան	5158,2	18,1	1027570	711685	315885	199,2
Շիրակի	5530,8	19,5	312540	158905	153639	56,5
Մերձգերեցյան	3777,5	13,3	290812	136611	154201	77,0
Սևան—Աղստևի	7135,9	25,1	320992	89884	231108	45,0
Զանգեզուրի	6813,4	24,0	182086	77765	104321	26,7
ՀՍՍՌ-ում	28415,8	100,0	2134000	1174850	959154	75,1

11 Հայկական ՍՍՌ տերիտորիան ըստ տնտեսական շրջանների բաժանելիս հիմք է ընդունվել Լ. Վալեսյանի առաջադրած սխեման. տես ՀՍՍՌ տնտեսական շրջանացման շուրջը հոդվածը, «Լենինյան ուղիով», 1965, № 2։

12 Առանց Սևանա լճի մակերեսի (1384 քառ. կիլոմետր)։

Աղյուսակի վերլուծությունը ցույց է տալիս, որ տնտեսական շրջաններում քաղաքային և գյուղական բնակչության քանակական հարաբերակցությունը խիստ անհավասար է. քաղաքային բնակչության տեսակարար կշիռը բարձր է Արարատի տնտեսական շրջանում (69,2%), ցածր է Սևան—Աղստևի տնտեսական շրջանում (28%)։ Տնտեսական շրջաններում քաղաքային բնակչության տեսակարար կշռի այդ մեծ տարբերությունները պայմանավորված են մի շարք գործոններով, բայց ամենից կարևորը և վճռականն այն է, որ Արարատի տնտեսական շրջանը, լինելով հանրապետության արտադրական կոմպլեքսի կենտրոնը, առաջատար դեր է խաղում նրա տնտեսական տերիտորիալ կառուցվածքում, հետևապես արտադրողական ուժերի զարգացման մակարդակով և տնտեսական կառուցվածքի բարդությամբ ու ավարտվածության աստիճանով Արարատի տնտեսական շրջանը ավելի բարձր է կանգնած, քան մյուս շրջանները։ Այստեղ է գտնվում մայրաքաղաք Երևանը, որտեղ կենտրոնացվել են հանրապետական և միութենական նշանակություն ունեցող արդյունաբերական առաջատար ճյուղերը, քիմիական արդյունաբերությունը, մեքենաշինությունը, տեքստիլ-տրիկոտաժի, սննդի ձեռնարկությունները և շինանյութերի արտադրությունը։ Արարատը միաժամանակ հանդիսանում է ինտենսիվ գյուղատնտեսության շրջան, որտեղ գտնվում են հանրապետության ոռոգելի հողերի կեսը, բազմամյա տնկիների 3/4-ը։ Այս շրջանում տեղական հումքի հիման վրա ստեղծվել է գինու-կոնյակի և պահածոների արտադրություն։

Հանրապետության բնակչության 48,2 տոկոսը, բանվոր-ծառայողների 60,0 տոկոսը ապրում են Արարատի տնտեսական շրջանում, որը տալիս է հանրապետության արդյունաբերության համախառն արտադրանքի 3/4 մասը։

Մյուս տնտեսական շրջանները այդպիսի առավելություններ առայժմ չունեն։ Այս շրջաններում դեռևս բավական դանդաղ տեմպերով են ընթանում տերիտորիայի յուրացումը և բնական ռեսուրսների օգտագործումը։ Քաղաքային բնակչության աճին զուգընթաց ընդարձակվել է և քաղաքային բնակավայրերի ցանցը։

Ելնելով «ՀՍՍՌ քաղաքների, քաղաքատիպ ավանների և բանվորական ավանների կատեգորիային դասելու կարգի մասին» Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության 1962 թ. հրամանագրից և հաշվի առնելով ժողովրդական տնտեսության ղեկավարման հետագա կատարելագործման, բնակչության սպասարկման, պետական գործերում աշխատավորների դերի բարձրացման շահերը, Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահությունը 1963 թ. հունվարի 12-ի հրամանագրով շրջանային ենթակայությունից, հանրապետական ենթակայությունն քաղաքների շարքը դասեց ևս 6 քաղաք՝ Ալավերդին, Արարատը (վերջինս 1964 թ. դեկտեմբերին նորից դարձավ շրջանային ենթակայության քաղաք), Արթիկը, Կամոն, Ղափանը, Հրազդանը։ Այդ կապակցությամբ էլ, նույն հրամանագրով Ղափան քաղաքի շրջագծի մեջ մտցվեցին Վաչագան, Բեխ, Շհարջիկ, Աչիլու բնակավայրերը, Հրազդան քաղաքի մեջ՝ Աթաբեկյան, Ջրառատ գյուղերը, իսկ Երևան քաղաքում կատարվեց հակառակը, նրա շրջագծից հանվեցին Սովետաշեն, Նոր Կյանք քաղաքատիպ ավանները և մի շարք այլ գյուղեր[13]։ 1965 թ. ապրիլի 23-ին հանրապետական քաղաքների շարքը դասվեց նաև Էջմիածինը։

13 «Սովետական Հայաստան», 1963, № 13։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ

Այսպիսով, հանրապետական ենթակայության քաղաքների թիվը հասավ 10-ի, շրջանայինը՝ 13-ի, քաղաքատիպ ավաններինը՝ 27-ի։ (Մանրամասն տե՛ս ՀՍՍՌ քաղաքային բնակավայրերի բնակչության աճի ցուցակը)։

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում 1926—1965 թթ. ընթացքում քաղաքային բնակավայրերի դասակարգումն ըստ բնակչության թվի։

Աղյուսակից պարզվում է, որ հանրապետությունում փոքր քաղաքների թիվը դեռևս բավական մեծ է։ Այսպես, օրինակ, 1965 թ. քաղաքային բնակավայրերի շուրջ կեսը կազմում են մինչև 5 հազար բնակիչ ունեցող բնակավայրերը, որտեղ ապրում է քաղաքային բնակչության մոտ 6 տոկոսը միայն։ Մասամբ բարձրացել է 5—50 հազար բնակիչ ունեցող բնակավայրերի տեսակարար կշիռը՝ 1926 թ. եղած 23,5 տոկոսից 1965 թ. այն հասել է 46 տոկոսի։ Իսկ այդ բնակավայրերի բնակչության թիվը, ընդհակառակը նվազել է համապատասխան թվականներին՝ 44,6 տոկոսից այն իջել է 23,8 տոկոսի։ Հատկապես մեծացել է Երևանի, Լենինականի, Կիրովականի տեսակարար կշիռը, հիշյալ քաղաքներում ապրում է հանրապետության բնակչության 38,2, իսկ քաղաքային բնակչության՝ 70,3 տոկոսը։

Աղյուսակ 3

Հայկական ՍՍՌ քաղաքային բնակչությունը և բնակավայրերը ըստ մարդահամարների տվյալների, և առ 1 հունվարի 1965 թ. դրությամբ

Քաղաքային բնակավայրերը ըստ բնակչության թվի	Քաղաքային բնակավայրերի թիվը								Քաղաքային բնակչությունը							
	1926 թ.		1939 թ.		1959 թ.		1965 թ.		1926 թ.		1939 թ.		1959 թ.		1965 թ.	
	բնակավայրերի թիվը	%-ը ընդհանուրի նկատմամբ	բնակավայրերի թիվը	%-ը ընդհանուրի նկատմամբ	բնակավայրերի թիվը	%-ը ընդհանուրի նկատմամբ	բնակավայրերի թիվը	%-ը ընդհանուրի նկատմամբ	բնակչության թիվը	%-ը ընդհանուրի նկատմամբ	բնակչության թիվը	%-ը ընդհանուրի նկատմամբ	բնակչության թիվը	%-ը ընդհանուրի նկատմամբ	բնակչության թիվը	%-ը ընդհանուրի նկատմամբ
Մինչև 3 հազար	13	62,0	4	22,3	11	27.8	13	26,0	18362	10,9	7844	2,1	19409	2,2	24313	2,1
3—5 »	2	10,0	2	11,2	6	19,4	11	22,0	9823	5,8	7966	2,2	20594	2,3	45249	3,8
5—10 »	4	19,0	8	44,5	9	25,0	11	22,0	31926	19,1	54895	15,0	77799	8,0	80608	6,9
10—15 »	—	—	1	5,5	4	11,1	6	12,0	—	—	10010	2,7	48106	5,5	73352	6,2
15—25 »	—	—	1	5,5	3	8,3	6	12,0	—	—	17607	4,8	55727	6,3	125379	10,7
25—50 »	1	4,5	—	—	1	2.8	—	—	42374	25,5	—	—	49423	5,6	—	—
50—100 »	1	4,5	1	5,5	—	—	1	2,0	64613	38,7	67729	18,5	—	—	75866	6,5
100—300 »	—	—	1	5,5	1	2,8	1	2,0	—	—	200396	54,7	108446	12,3	126915	10,8
300 հազարից բարձր	—	—	—	—	1	2,8	1	2,0	—	—	—	—	509340	57,8	623166	53,0

Աննախընթաց չափերով աճել է մայրաքաղաքի բնակչությունը։ Այստեղ է ապրում հանրապետության բնակչության 29,2, իսկ քաղաքային բնակչության 53,1 տոկոսը։ Բնակչության այդպիսի մեծ կենտրոնացումը Երևանում[14], հիմնականում պետք է բացատրել այն հանգամանքով, որ մինչև վերջերս էլ բավարար ուշադրություն չի դարձվել փոքր քաղաքների արտադրողական ուժերի զարգացման վրա։

Հայկական ՍՍՌ-ում քաղաքային բնակավայրերի զարգացման և ձևավորման պրոցեսի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանց մի մասը առաջացել է «դատարկ» վայրերում, մյուս մասը՝ հին բնակատեղերում՝ կապված տնտեսության այս կամ այն ճյուղի զարգացման հետ։ Հետևապես, այդ քաղաքների առաջացումը միատեսակ չէ։ Քաղաքային բնակավայրերը պետք է խմբավորել, նրանցից յուրաքանչյուրի տեսակարար կշիռը բնակչության թվի և բնակավայրերի քանակի մեջ պարզելու համար։ Այդ մասին տե՛ս աղյուսակ № 4։

Աղյուսակ 4

	Բնակավայրեր		Բնակչություն	
	Թիվը	տոկոսներով ընդհանուրի նկատմամբ	Թիվը	տոկոսներով ընդհանուրի նկատմամբ
1. «Դատարկ» կամ համարյա «դատարկ» վայրերում առաջացած քաղաքային բնակավայրեր	11	22,0	50684	4,3
2. Հին բնակավայրերի բաղայի վրա առաջացած քաղաքային բնակավայրեր	35	70,0	344560	28,3
3. Նախասովետական քաղաքներ	4	8,0	779606	67,4
	50	100,0	1174850	100,0

Քաղաքային բնակավայրերի առաջացման դասակարգումից երևում է, որ դրանց $^1/_5$ մասը նոր ստեղծված քաղաքներ են և առաջացել են «դատարկ» վայրերում, բայց ցածր է հիշյալ խմբում ապրողների տեսակարար կշիռը հանրապետության ընդհանուր քաղաքային բնակչության մեջ։

Այդ անհամապատասխանությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով. առաջին, սոցիալիստական շինարարության ընթացքում նախկին մի շարք գյուղեր, մասնավորապես շրջկենտրոններ, իրենց զարգացման ընթացքում վեր են ածվել քաղաքային բնակավայրերի և, երկրորդ, որ ամենահիմնականն ու կարևորն է, հին քաղաքները, և հատկապես Երևանը, որպես մայրաքաղաք, արագ զարգանալու շնորհիվ խիստ ընդարձակվել են։ Քաղաքային տերիտորիայի շրջանակի մեջ վերցվել են բազմաթիվ գյուղեր և բնակելի կետեր։ Օրինակ, 1959 թ. մարդահամարի ժամանակ Երևանի շրջագծի մեջ մտցված են երեք տասնյակից ավելի բնակավայրեր։

---

14 Մեր կարծիքով բնակչության աճի տեսակետից Երևանն այժմ զարգացման այնպիսի մակարդակի է հասել, որ ժամանակն է մտածել նրա հետագա մեխանիկական աճի սահմանափակման մասին։ Դա հետազոտման առանձին հարց է, որով անշուշտ պետք է զբաղվեն թե՛ պլանավորող օրգանները, և թե՛ գիտական հիմնարկները։

Հայկական ՍՍՌ քաղաքային բնակավայրերի բնակչության աճը[15]

	Բնակավայրերը	Քաղաքային կարգավիճակ ստացել է տարին	Գյուղատնտեսական տարին	Բնակչության թիվը ըստ մարդահամարների 1897 թ.	1926 թ.	1939 թ.	1959 թ.	առ 1 հունվարի 1965 թ. դրությամբ	1965 թ. 1897 թ. համեմատությամբ աճը %
1	2	3	4	5	6	7	8	9	10
	Հանրապետական ենթակայության քաղաքներ								
1.	Երևան	—	1850	42129	64613	204214	493494	623166	14,8
2.	Լենինական	—	1850	30616	42374	67729	108446	126915	4,1
3.	Կիրովական	—	1924	3917	8640	17607	49423	75868	19,4
4.	Դիլիջան	1938	1951	3940	6464	5296	11412	14139	3,6
5.	Ալավերդի	—	1938	1423	2103	10[illegible]10	16713	20497	14,4
6.	Ղափան		1938	2272	1551	8511	19315	24944	11,1
7.	Արթիկ	1938	1945	2950	3168	5761	9071	11190	3,8
8.	Կամո	—	1850	8486	8447	8277	8751	17376	2,1
9.	Հրազդան	1950	1959	2386	3192	4162	7769	18352	7,7
10.	Էջմիածին	—	1924	5267	8435	9783	19699	24920	4,7
	Շրջանային ենթակայության քաղաքներ								
1.	Արարատ	1938	1962	—	44	2329	5412	6911	—
2.	Արովյան	—	1963	548	879	10[illegible]4	2289	3734	6,8
3.	Արտաշատ	1938	1961	833	2505	4148	7[illegible]77	8956	10,7
4.	Աշտարակ	1960	1963	3571	4853	5582	7563	8792	2,5
5.	Գորիս	—	նախասովետական ժամ.	1450	2690	5571	10377	12149	8,4
6.	Իջևան	1956	1961	1790	2261	4426	7639	9594	5,3
7.	Լուսավան	1953	1961	—	—	—	2350	5604	—
8.	Հոկտեմբերյան	1938	1947	—	533	5639	14932	19290	—
9.	Սևան	1938	1961	1371	1052	2668	6415	8036	5,8
10.	Սպիտակ	1949	1960	3004	4078	5035	8667	10283	3,5
11.	Ստեփանավան	—	1938	3324	4970	6057	979[illegible]	11381	3,4
12.	Ջերմուկ	1951	1961	163	60	1309	2062	3007	18,4
13.	Փաջարան	1947	1958	394	431	548	11385	14210	36,9
	Քառաբատիպ ավաններ								
1.	Ագարակ	1952	—	—	—	—	1614	2667	—
2.	Ապարան	1963	—	1668	2166	3157	4005	6160	3,7
3.	Ադիգյոխով	1956	—	22	—	201	1163	1823	83,1
4.	Արգնի	1953	—	—	26	1677	3195	4699	—
5.	Ախթալա	1939	—	134	453	872	3251	4612	34,4
6.	Այրում	1960	—	444	—	4[illegible]3	1001	1045	2,4
7.	Ադի-Գեմզա	1938	—	92	196	97[illegible]	1119	2338	25,4
8.	Բերդ	1963	—	1345	2358	442[illegible]	6055	6570	4,9
9.	Գաղարին	1961	—	—	—	—	416	585	—
10.	Եղեգնաձոր	1960	—	1307	1583	2567	3567	4385	3,4
11.	Վեղի	1963	—	2798	1830	2830	3[illegible]81	4768	1,7
12.	Լուսակերտ	1953	—	—	—	910	3616	2092	—
13.	Քոլագիրան	1940	—	—	154	5[illegible]4	856	836	—
14.	Շամլուղ	1938	—	246	836	1874	2862	3151	12,8
15.	Թումանյան	1947	—	—	—	74	2640	2879	
16.	Ցեմգաչեն	1958	—	1496	1331	3379	35[illegible]9	4900	3,3
17.	Նոր կյանք	1936	—	52	155	464	2023	2510	48,3
18.	Սովետական	1936	—	—	—	947	2074	2411	—
19.	Նոր Հաճըն	1958	—	—	—	—	1406	1528	—

1	2	3	4	5	6	7	8	9	24
20.	Ծաղկաձոր	1958	—	345	618	654	1020	1162	3,4
21.	Մարալիկ	1962	—	1302	1646	1882	2177	2431	1,8
22.	Մարտունի	1963	—	1534	2499	3763	5555	6374	4,1
23.	Մեղրի	1958	—	972	1161	1893	3095	4004	4,1
24.	Բաստակերտ	1951	—	—	3[illegible]9	329	2317	3018	—
25.	Սիսիան	1958	—	1266	1186	2215	3838	7552	5,9
26.	Կալինինո	1961	—	3076	4042	4225	4766	6059	1,9
27.	Թալին	1964	—	1438	1091	2255	2469	4971	3,4

1897—1965 թթ. ընթացքում քաղաքային բնակավայրերում բնակչության մեծ աճը բնականից բացի, բացատրվում է նաև նրանով, որ արդյունաբերության զարգացման հետևանքով տարեցտարի ընդարձակվել է տվյալ բնակավայրի տերիտորիան՝ մոտակա բնակավայրերը վերցվել են քաղաքի շրջագծի մեջ։ Դա հատկապես տեղի է ունեցել մայրաքաղաքում, գունավոր մետալուրգիայի կենտրոններում (Ալավերդում, Հալիձորում, Քաջարանում), առողջարաններում և հանրապետության ենթակայության մյուս քաղաքներում ու առանձին քաղաքատիպ ավաններում։

Այսպես, ՀՍՍՌ Գերագույն սովետի նախագահության հրամանագրերով Կամո քաղաքին են միացվել Հացառատ, Արծվաքար գյուղերը, որոնք վերջին մարդահամարի պահին ունեին համապատասխանաբար 4673 և 1561 բնակիչ, Սիսիան ավանին՝ Ուղ, Տոլորս, Աշոտավան գյուղերը և այլն։ Վերջին երկու տարում կատարվել է և հակառակ երևույթը՝ 1963 թ. Երևանի շրջագծից դուրս է հանվել, բայց վարչական կարգով նրան է ենթարկվում Սովետաշեն, Նոր Կյանք քաղաքատիպ ավանները և մի քանի գյուղեր, որի հետևանքով էլ 1959 թ. Երևանի բնակչությունը 509340-ից իջել է 493494-ի։ Ուստի, քաղաքների բնակչության թվի խիստ բարձրացումը առանձին քաղաքներում պետք է ընդունել որոշ վերապահումներով, նկատի ունենալով տվյալ քաղաքի տերիտորիայի շրջագծի սահմանների փոփոխությունները։

* * *

Այսպիսով, քաղաքային բնակավայրերի զարգացման համառոտակի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ժողովրդական տնտեսության պլանային զարգացման շնորհիվ վերացվեց Սովետական Հայաստանի տերիտորիայի վրա արտադրության և բնական ռեսուրսների միջև պատմականորեն ստեղծված անհամապատասխանությունը։ Արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի մեջ կատարված արմատական տեղաշարժերն անդրադարձան նաև բնակչության տեղաբաշխման վրա, խիստ փոխվեց քաղաքային և գյուղական բնակչության հարաբերակցությունը, քաղաքային բնակչության տեսակարար կշիռը 10,4%-ից 1913 թ. հասավ 55,1%-ի 1965 թ.։ Այդ ժամանակաշրջանում հանրապետության քաղաքային բնակավայրերն ավելացան 12,5 անգամ, իսկ դրանց բնակչության թիվը 11,3 անգամ։

Х. А. Аветисян

РОСТ ГОРОДОВ СОВЕТСКОЙ АРМЕНИИ

Резюме

Армения в годы советской власти превратилась в передовую республику с развитой индустрией, сельским хозяйством и высокой культурой. Валовая продукция Арм. ССР в 1964 г. превысила уровень 1913 г. в 95 раз, тогда как по СССР, в целом, она возросла в 56 раз. Армения стала одним из важных промышленных центров СССР по производству цветной металлургии, химии, приборостроения, в частности, электромашиностроения, наряду с развитием легкой и пищевой промышленности. В период социалистического строительства помимо Еревана — центра передовой индустрии, сформировались и новые промышленные узлы — Кироваканский, Ленинакан-Артикский, Зангезурский, Алавердский, Раздан-Севанский. Бурное развитие производительных сил и их планомерное размещение внесли коренные изменения в состав населения республики, способствовали увеличению городского населения, росту отдельных городов.

Наряду с городами Ереван, Ленинакан, Горис, Камо в настоящее время имеются 50 городских поселений, что примерно в 12 раз больше, чем было до революции. А численность городского населения увеличилась более чем в 11 раз.

Быстрый рост городов и численности населения прежде всего обусловлены внутренними сдвигами экономики республики. В связи с изменением характера хозяйства изменился и характер занятости данного поселения. Из сельских они превратились в городские. Так например, на базе Вохчи, Пирдоудан, Катнарат и других сельских поселений образовался крупный горнорудный центр Каджаран. Таким путем развились и другие центры цветной металлургии — Кафан, Алаверди. В черту столицы включены более 30 сельских поселений.

В статье показаны основные причины сосредоточения большинства городского населения в Араратском экономическом районе, высказывается мысль о дальнейшем увеличении городского населения и в других экономических районах путем развития промышленности на базе сырьевых и трудовых ресурсов района.